ԿՈՉ

Հանգանակիչ Մասնաժողովի ի նպաստ Թիւրքական Հայաստանի հայ տառապեալների

Հայ հասարակութեանը յայտնի է, որ ի Տէր հանգուցեալ ամենայն հայոց կաթուղիկոս Մկրտիչ Ա.-ի հայրապետական կոնդակով անցեալ տարի հաստատուեց Թիֆլիսում մի **կենտրոնական Հանգանակիչ Մասնաժողով** ի նպաստ Թիւրքական Հայաստանի տառապեալ հայ ազգաբնակութեան և այդ Մասնաժողովը պաշտօնապէս վաւերացրուեց և թոյլատրուեց թէ Կովկասի Փոխարքայի և թէ կենտրոնական բարձր իշխանութեան կողմից: Մի քանի ամսուայ ընթացքում Հանգանակիչ Մասնաժողովը, որի հրատարակած կոչին արձագանք տուեց հայ հասարակութիւնը, կարողացաւ բաւական խաշոր գումար ուղարկել Հայաստանի տառապեալներին ռուսաց գեսպան Զինովիեվի և Պոլսի հայոց պատրիարքարանի միջոցով:

Հանգանակիչ Մասնաժողովը մեծ յոյս ունէր, որ այս տարվայ բերքերը և մանաւանդ Թիւրքիայում հրատարակուած ազատութիւնը հնարաւորութիւն կը տան Հայաստանի տառապեալ ազգաբնակութեանը՝ տարի կանգնել, բարւոքել իր անտեսական վիճակը: Սակայն վերջին տեղեկութիւնները գալիս են հաստատելու, որ Թիւրքական Հայաստանի մի բանի գաւառներում և մանաւանդ Զէյթունում ոչ միայն մեծ կարօտութիւն կայ, այլ և հայ ժողովուրդը մատնուած է ահագին տառապանքների վտանգին, եթէ նրան օգնութեան ձեռք չը կարկառուի դրսից:

Այդպիսի պարագաների մէջ, Հանգանակիչ Մասնաժողովս, որ ամբողջ կայսրութեան մէջ միակ պաշտօնապէս ճանաչուած և վաւերացուած և վեհ. հայրապետի կոնդակով հաստատուած մարմինն է, իր բարոյական ուղղահ պարտականութիւնն է համարում կոչ անել Ռուսաստանի լայնածաւալ կայսրութեան մէջ փռուած հայ ժողովրդին և գաղութներին՝ փութալ եղբայրական և մարդասիրական օգնութեամբ ամրացնելու Հայաստանի մեր թշուառ և տառապեալ, սովատանջ ժողովրդի ցաւերը, դէթ ժամանակաւորապէս, մինչև որ նա կը կարողանայ, շնորհիւ պետական նոր կարգերի, բարւոքել իր քայքայուած անտեսական դրութիւնը:

Մասնաժողովս համոզուած է, որ ինչպէս առաջ, այսօր ևս հայ ժողովրդի բոլոր խաւերի մէջ նրա կոչը արձագանք կը գտնէ և ամեն մի հայ կը շտապէ իր կամաւոր լուման ձգել տառապանքը սփոփելու սահմանուած ընդհանուր ազգային գանձանակի մէջ։

Նուէրները կարելի է ուղարկել կամ Մասնաժողովիս գանձապահ պ. Առաքել Սարուխանեանի (Тифлисъ, Правленіе Общества А. И. Манташева и К°), կամ նախագահ Ալէք. Մելիք-Ազարեանի հասցէով։

Մասնաժողովս լիայոյս է, որ հայ թերթերի խմբագրութիւնները ևս չեն պլանայ ընդունել նուէրներ և յանձնել Մասնաժողովիս։

Ընդ սմին Մասնաժողովս պարտք է համարում յայտնել ի գիտութիւն նուիրատուների, որ նուէրները կը հասցուեն դրծադրուելու իրանց նպատակին սահմանուած կարգով կամ Կ. Պոլսի ամենապատիւ որբազան պատրիարքին կամ Թիւրքիոյ Հայոց գաւառական ազգային վարչութիւններին և իր ժամանակին մանրամասն հաշիւ կը տրուի նուիրատու հասարակութեան։

Նախագահ Հանգանակիչ Մասնաժողովի՝
Ալեքսանդր Մելիք-Ազարեանց

Անդամ-քարտուղար՝ Համբարձում Առաքելեանց.